



**ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱՐԱՆ**

ԼՂՀ վերաքննիչ դատարանի որոշում
Նյութ թիվ 0052/13-09

Նյութ թիվ 0052/13-09թ.

Նախագահող դատավոր՝ Լ. Ավանեսյան
Դատավորներ՝ Ն. Խաչատրյան
Վ. Հովսեփյան

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ
ՀԱՆՈՒՆ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

2010թ. հուլիսի 7-ին

ք. Ստեփանակերտ

ԼՂՀ Գերագույն դատարանը վճռաբեկության կարգով, կազմով՝

նախագահությամբ
դատավորներ

Ա. Դանիելյանի
Գ. Հարությունյանի
Գ. Գրիգորյանի

քարտուղար
մասնակցությամբ՝
դատախազ

Վ. Հարությունյանի

ԼՂՀ Ոստիկանության ՔԿՎ ՔԿՏ պետ
պաշտպան

Լ. Բարսեղյանի
Դ. Գրիգորյանի
Վ. Ստեփանյանի

դռնբաց դատական նիստում, քննելով Արտյուշա Միքայելի Սարգսյանի նկատմամբ նշանակված 2200 ժամ հանրային աշխատանքները ազատազրկմամբ փոխարինելու մասին ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. մայիսի 20-ի որոշման դեմ ԼՂՀ Գլխավոր դատախազ Ա. Ղարամյանի վճռաբեկ բողոքը

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Գործի դատավարական նախապատմությունը.

1. ԼՂՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի (այսուհետ՝ առաջին ատյանի) դատարանի 2008թ. հուլիսի 10-ի օրինական ուժի մեջ մտած դատավճռով Արտյուշա Միքայելի Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի առաջին մասով և ենթարկվել տուգանքի 500.000 (հինգ հարյուր հազար) դրամի չափով՝ 6 (վեց) ամսվա ընթացքում ամսական 83.300 դրամ վճարելու պայմանով:

2. Նշանակված տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին ԼՂՀ ոստիկանության քրեակատարողական վարչության քրեակատարողական տեսչության

միջնորդագրի հիման վրա օրինական ուժի մեջ մտած առաջին ատյանի դատարանի 2008թ. դեկտեմբերի 1-ի որոշմամբ Արտյուշա Միքայելի Սարգսյանի նկատմամբ նշանակված 500.000 դրամ տուգանքը փոխարինվել է 2200 (երկու հազար երկու հարյուր) ժամ հանրային աշխատանքներով:

2009թ. հուլիսի 23-ին ԼՂՀ ոստիկանության քրեակատարողական վարչության քրեակատարողական տեսչությունը միջնորդագիր է ներկայացրել առաջին ատյանի դատարան՝ դատապարտյալ Արտյուշա Միքայելի Սարգսյանի նկատմամբ նշանակված 2200 ժամ տևողությամբ հանրային աշխատանքները կալանքով կամ ազատազրկմամբ փոխարինելու մասին:

Առաջին ատյանի դատարանի 2009թ. օգոստոսի 25-ի որոշմամբ միջնորդությունը բավարարվել է: Դատապարտյալ Ա. Սարգսյանի նկատմամբ նշանակված 2200 ժամ տևողությամբ հանրային աշխատանքները փոխարինվել է 733 (յոթ հարյուր երեսուներեք) օր (2 (երկու) տարի 4 (չորս) օր) ժամկետով ազատազրկմամբ, նրա նկատմամբ որպես խափանման միջոց ընտրել կալանքը և դատական նիստերի դահլիճից վերցվել արգելանքի տակ: Պատժի կրման սկիզբը հաշվելով 2009թ. օգոստոսի 25-ը:

Նշված որոշման դեմ վերաքննիչ բողոք է ներկայացրել դատապարտյալ Ա. Սարգսյանը՝ խնդրելով բեկանել իր նկատմամբ հանրային աշխատանքները ազատազրկմամբ փոխարինելու մասին առաջին ատյանի դատարանի 25.08.2009թ. որոշումը և կայացնել նոր դատական ակտ, չկապված ազատազրկելու հետ:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2009թ. հոկտեմբերի 12-ի որոշմամբ Ա.Սարգսյանի վերաքննիչ բողոքը մերժվել և առաջին ատյանի դատարանի 2009թ. օգոստոսի 25-ի որոշումը թողնվել է օրինական ուժի մեջ:

Նշված որոշման դեմ վճռաբեկ բողոք է ներկայացրել դատապարտյալի պաշտպանը՝ խնդրելով բեկանել տուգանքը հանրային աշխատանքներով փոխարինելու մասին առաջին ատյանի դատարանի 2008թ. դեկտեմբերի 1-ի որոշումը՝ հանրային աշխատանքները 2 տարի 4 օր ժամկետով ազատազրկման փոխարինելու մասին նույն դատարանի 2009թ. օգոստոսի 25-ի և նշված որոշումն օրինական ուժի մեջ թողնելու մասին ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2009թ. հոկտեմբերի 12-ի որոշումները, օրինական ուժ տալով առաջին ատյանի դատարանի 2008թ. հուլիսի 10-ի դատավճռին: Խնդրել է փոխել նաև Արտյուշա Սարգսյանի նկատմամբ ընտրված խափանման միջոցը՝ կալանքը և նրան ազատ արձակել դատական նիստերի դահլիճից:

ԼՂՀ Գերագույն դատարանի 2009թ. դեկտեմբերի 11-ի որոշմամբ վճռաբեկ բողոքը բավարարվել է մասնակիորեն: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2009թ. հոկտեմբերի 12-ի որոշումը մասնակիորեն բեկանվել է և Ա. Սարգսյանի նկատմամբ նյութերն ուղարկվել առաջին ատյանի դատարան՝ նոր քննության: Ա.Սարգսյանի նկատմամբ խափանման միջոցը կալանքը թողնվել է անփոփոխ:

Առաջին ատյանի դատարանն իր 2009թ. դեկտեմբերի 29-ի որոշմամբ դատապարտյալ Ա.Սարգսյանի նկատմամբ առաջին ատյանի դատարանի 2008թ. դեկտեմբերի 1-ի որոշմամբ նշանակված 2200 ժամ տևողությամբ հանրային աշխատանքները փոխարինել է երկու ամիս կալանքով և հաշվի առնելով, որ Արտյուշա Սարգսյանն արդեն իսկ կրել է երկու ամիս ժամկետով կալանքը, նրան ազատել է պատժից և ազատ արձակել դատական նիստերի դահլիճից:

Որոշման դեմ 2010թ. հունվարի 25-ին վերաքննիչ բողոք է բերել ԼՂՀ Քաջաթաղի շրջանի դատախազը՝ խնդրելով բեկանել առաջին ատյանի դատարանի 2009թ. դեկտեմբերի 29-ի որոշումն ու դատապարտյալ Ա. Սարգսյանի նկատմամբ նշանակված 2200 ժամ հանրային աշխատանքները փոխարինել ազատազրկմամբ՝ 2 տարի 3 օր (733 օր) ժամկետով:

Վերաքննիչ բողոքին պատասխան չի ներկայացվել:

ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. փետրվարի 24-ի որոշմամբ վերաքննիչ բողոքն ընդունվել է վարույթ և նշանակվել դատական քննության 2010թ. մարտի 10-ին:

3. Վերաքննիչ բողոքի քննության ժամանակ, վերաքննիչ դատարանը գտնելով, որ քննարկվող քրեախրավական հարաբերության նկատմամբ կիրառման ենթակա ԼՂՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի պահանջները հակասում են ԼՂՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներին, կասեցրել է գործի վարույթը և որոշում կայացրել ԼՂՀ Սահմանադրության 114-րդ հոդվածի 2.7 կետով սահմանված կարգով՝ ԼՂՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ԼՂՀ Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու խնդրանքով ԼՂՀ Գերագույն դատարանին դիմելու մասին:

2009թ. ապրիլի 22-ին ԼՂՀ վերաքննիչ դատարանում ստացվել է ԼՂՀ Գերագույն դատարանի 12.04.2010թ. որոշումը՝ համաձայն որի՝ «Սահմանադրական դատավարության մասին» ԼՂՀ օրենքի 20-րդ հոդվածի 1-ին կետի հիմքով ԼՂՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասի՝ ԼՂՀ Սահմանադրության համապատասխանության վերաբերյալ ԼՂՀ վերաքննիչ դատարանի դիմումի քննության ընդունումը մերժվել է՝ դիմումում առաջադրված հարցը Գերագույն դատարանին ենթակա չլինելու պատճառաբանությամբ:

2010թ. ապրիլի 23-ին ԼՂՀ վերաքննիչ դատարանն որոշում է կայացրել թիվ 0052/13-09թ. նյութերով վարույթը վերսկսելու և քննության նշանակելու մասին:

2010թ. մայիսի 23-ի որոշմամբ ԼՂՀ վերաքննիչ դատարանը մերժել է դատախազ Մ. Աղաջանյանի վերաքննիչ բողոքը, առաջին աստիճանի դատարանի 2009թ. դեկտեմբերի 29-ի որոշումը թողնելով օրինական ուժի մեջ:

ԼՂՀ Գլխավոր դատախազ Ա.Ղարամյանը վերաքննիչ դատարանի որոշումը բողոքարկել է վճռաբեկության կարգով:

Գերագույն դատարանը 2010թ. հունիսի 18-ի որոշմամբ ԼՂՀ Գլխավոր դատախազի բողոքը ընդունել է վարույթ:

2. Վճռաբեկ բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը.

Վճռաբեկ բողոքը քննվում է հետևյալ հիմքերի սահմաններում ներքոհիշյալ հիմնավորումներով.

Բողոք բերած անձը գտնում է, որ վերաքննիչ դատարանի որոշումն անհիմն է, քանի որ ԼՂՀ վերաքննիչ դատարանը իր որոշումը հիմնավորել է նրանով, որ չնայած ԼՂՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասը կարգավորում է պատժի մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու հարցը, սակայն դատապարտյալի նկատմամբ փաստորեն նշանակում է նոր պատիժ, ուստի գտնում է, որ նշված հոդվածով հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում հանրային աշխատանքների չկրած մասը որոշակի ժամկետով ազատազրկմամբ փոխարինելու մասին եզրույթը կիրառելի է այն դեպքերի համար, երբ կոնկրետ անձին մեղսագրված արարքի սանկցիան նախատեսում է նաև ազատազրկման ձևով պատիժ, քանի որ հակառակ դեպքում կխախտվեն պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքները:

Այնուհետև, վերաքննիչ դատարանը, վկայակոչելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին կետը, 48-րդ հոդվածը, 61-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը, 62-րդ և 63-րդ հոդվածների պահանջները, հետևություն է կատարում, որ իրավասու դատարանները պատիժ նշանակելիս պետք է ղեկավարվեն հետևյալ սկզբունքների պարտադիր հաշվառմամբ՝ օրինականության, արդարության, պատժի անհատականացման և մարդասիրության: ԼՂՀ վերաքննիչ դատարանը իր որոշումը հիմնավորել է նաև ԼՂՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջով, որի համաձայն արգելվում է նշանակել ավելի ծանր պատիժ, քան կարող էր կիրառվել հանցագործության կատարման պահին գործող օրենքով և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջով՝ ոչ ոք չի կարող դատապարտվել որևէ գործողության կամ անգործության համար, որը նրա կատարման պահին գործող ազգային կամ միջազգային օրենքի համաձայն քրեական

հանցագործություն չի համարվել: Չի կարող դրվել նաև ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա է եղել կիրառման քրեական հանցագործության կատարման պահին:

Դատարանի կողմից անտեսվել է այն հանգամանքը, որ ԼՂՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ կետը կիրառվում է ոչ թե պատիժ նշանակելիս, այլ պատժի տվյալ տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելիս և խոսք չի կարող լինել պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտման մասին: Նշված հոդվածով որևէ սահմանափակում չի նախատեսվում, այն կիրառելի է հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելու ցանկացած դեպքում: ԼՂՀ վերաքննիչ դատարանը նման որոշում կայացնելով խախտել է ԼՂՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը, համաձայն որի հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է ԼՂՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժի կամ քրեաիրավական այլ ներգործության: Քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելը հնարավոր է միայն ԼՂՀ քրեական օրենսգրքով նախատեսված հիմքերի և պայմանների առկայության դեպքում:

Ավելին, ԼՂՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետի համաձայն անձը կարող է զրկվել ազատությունից միայն օրենքով սահմանված կարգով հետևյալ դեպքերում.

- դատարանի կողմից անձը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար,
- անձը չի կատարել դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած կարգադրությունը,
- օրենքով սահմանված որոշակի պարտականությունների կատարումն ապահովելու նպատակով և այլն:

Դատարանը մեջբերելով «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջը, այն է՝ «Ոչ ոք չի կարող դատապարտվել որևէ գործողության կամ անգործության համար, որը նրա կատարման պահին գործող ազգային կամ միջազգային օրենքի համաձայն քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող դրվել նաև ավելի ծանր պատիժ, քան այն, որը ենթակա է եղել կիրառման քրեական հանցագործության կատարման պահին», նշել է, որ ավելին, խոսքը վերաբերում է ոչ միայն նեղ իմաստով պատժի նշանակմանը, այլ այն ավելի ընդհանրային բնույթ ունի և վերաբերում է նաև դատապարտյալի կողմից ընդհանրապես պատիժ կրելուն, այսինքն այն իր մեջ ներառում է նաև պատժի մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու ինստիտուտը: ԼՂՀ վերաքննիչ դատարանի նման մոտեցումն անհիմն է, քանի որ «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասում հստակ նշված է, որ չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին, այսինքն խոսվում է ոչ թե պատիժ դնելու, այլ միանշանակ պատիժ նշանակելու մասին: Իսկ դատական որոշումների կատարման փուլում պատժի փոխարինում և դատավճիռ կայացնելիս պատժի նշանակում տերմինների նույնացումը, հակասում է ԼՂՀ «Իրավական ակտերի մասին» օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասին, ըստ որի նորմատիվ իրավական ակտում միևնույն հասկացություն սահմանելիս կամ միևնույն միտքն արտահայտելիս պետք է կիրառվեն միևնույն բառերը, տերմինները կամ բառակապակցությունները՝ որոշակի հերթականությամբ: Իրավական ակտում տարբեր հասկացությունները չեն կարող օգտագործվել միևնույն տերմինով:

Բողոք բերած անձը խնդրում է բեկանել Արտյուշա Միքայելի Սարգսյանի նկատմամբ կայացված ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. մայիսի 20-ի որոշումը և կայացնել նոր դատական ակտ՝ 2200 ժամ հանրային աշխատանքները փոխարինելով համապատասխան ժամկետով ազատազրկմամբ:

3. Գերագույն դատարանի պատճառաբանությունները և եզրահանգումը.

Բողոքում նշված հիմքերի սահմաններում վերլուծելով ներկայացված նյութերը, Գերագույն դատարանը գտնում է, որ՝ բողոքը անհիմն է, ենթակա է մերժման հետևյալ պատճառաբանությամբ.

ԼՂՀ Սահմանադրության 7-րդ հոդվածի 1-ին, 6-րդ մասերի համաձայն՝

Սահմանադրությունն ունի բարձրագույն իրավաբանական ուժ, և նրա նորմերը գործում են անմիջականորեն: Օրենքներն ու այլ իրավական ակտերը պետք է համապատասխանեն միջազգային իրավունքի հանրաճանաչ սկզբունքներին և նորմերին:

Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին Եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) 5-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ յուրաքանչյուր ոք ունի ազատության և անձնական անձեռնմխելիության իրավունք: Ոչ ոքի չի կարելի ազատությունից զրկել այլ կերպ, քան հետևյալ դեպքերում և օրենքով սահմանված կարգով՝

a) անձին օրինական կերպով կալանքի տակ պահելը իրավասու դատարանի կողմից նրան դատապարտելուց հետո,

b) անձի օրինական ձերբակալումը կամ կալանավորումը դատարանի օրինական կարգադրությանը չենթարկելու համար կամ օրենքով նախատեսված ցանկացած պարտականության կատարումն ապահովելու նպատակով.

c) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ հանցագործություն կատարած լինելու հիմնավոր կասկածի առկայության դեպքում: Նրան իրավասու օրինական մարմնին ներկայացնելու նպատակով, կամ այն դեպքում, երբ դա հիմնավոր կերպով անհրաժեշտ է համարվում նրա կողմից հանցագործության կատարումը կամ այն կատարելուց հետո նրա փախուստը կանխելու համար,

d) անչափահասին կալանքի վերցնելը օրինական կարգադրության հիման վրա՝ դաստիարակչական հսկողության համար, կամ նրա օրինական կալանավորումը՝ նրան իրավասու իրավական մարմնին ներկայացնելու նպատակով,

e) անձանց օրինական կալանքի վերցնելը՝ վարակիչ հիվանդությունների տարածումը կանխելու նպատակով, ինչպես նաև հոգեկան հիվանդներին, գինեմոլների կամ թմրամոլներին կամ թափառաշրջիկներին օրինական կալանքի վերցնելը,

f) անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը՝ նրա անօրինական մուտքը երկիր կանխելու նպատակով, կամ այն անձի օրինական կալանավորումը կամ ձերբակալումը, որի դեմ միջոցներ են ձեռնարկվում նրան արտաքսելու կամ հանձնելու նպատակով:

Անձին ազատությունից զրկելու նշված բոլոր վեց հիմքերն ու նույն կարգը սահմանված է նաև ԼՂՀ Սահմանադրության 22-րդ հոդվածով:

Այսինքն, նման ձևով Կոնվենցիայում, ԼՂՀ օրենսդրությամբ ամրագրվել են այն սպառիչ դեպքերը, որոնցով պայմանավորված անձը կարող է զրկվել ազատությունից:

ԼՂՀ Սահմանադրության 22-րդ հոդվածի 2-րդ մասի 2.1 կետը սահմանում է՝ անձը կարող է զրկվել ազատությունից միայն օրենքով սահմանված կարգով՝ հետևյալ դեպքերում՝ դատարանի կողմից անձը դատապարտվել է հանցագործություն կատարելու համար...: Գերագույն դատարանը արձանագրում է, որ Սահմանադրությամբ սահմանված նշված կանոնը կիրառվում է յուրաքանչյուր դեպքում, երբ մեղադրական դատավճռով անձը դատապարտվում է ազատազրկման: Այլ կերպ ասած՝ դատապարտվածներին կալանքի տակ պահելու օրինական հիմքը դատարանի մեղադրական դատավճիռն է, եթե տվյալ հանցագործության համար դատարանը որպես պատիժ նշանակել է ազատազրկում, և այն մտել է օրինական ուժի մեջ:

Նշված սկզբունքներն են ամրագրված նաև ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 442-րդ հոդվածում, որով նախատեսված է դատական ակտերի ուժի մեջ մտնելը և դրանց ի կատար ածումը:

Նյութերից հաստատված է, որ առաջին ատյանի դատարանի 2008թ. հուլիսի 10-ի դատավճռով Ա. Սարգսյանը մեղավոր է ճանաչվել ԼՂՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասով (ծառերի, թփերի և բուսածածկի ապօրինի հատումը) և դատապարտվել տուգանքի 500000 (հինգ հարյուր հազար) դրամ՝ 6(վեց) ամսվա ընթացքում ամսական 83300 (ութսուներեք հազար երեք հարյուր) դրամ վճարելու պայմանով: Ընդհանրապես ԼՂՀ քրեական օրենսգրքի 296-րդ հոդվածի 1-ին մասի սանկցիան նախատեսում է պատիժ, տուգանքի ձևով՝ նվազագույն աշխատավարձի հինգհարյուրապատիկից յոթհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով՝ առավելագույնը երեք տարի ժամկետով, կամ կալանքով՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով:

Համաձայն ԼՂՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի՝ հանցագործության համար մեղավոր ճանաչված անձի նկատմամբ նշանակվում է արդարացի պատիժ, որը որոշվում է նույն օրենսգրքի Հատուկ մասի համապատասխան հոդվածի սահմաններում՝ հաշվի առնելով նույն օրենսգրքի Ընդհանուր մասի դրույթները:

Պատժի տեսակը և չափը որոշվում են հանցագործության՝ հանրության համար վտանգավորության աստիճանով և բնույթով, հանցավորի անձը բնութագրող տվյալներով, այդ թվում՝ պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող կամ ծանրացնող հանգամանքներով:

Հանցագործության համար նախատեսված պատիժներից առավել խիստը նշանակվում է, եթե նվազ խիստ տեսակը չի կարող ապահովել պատժի նպատակները:

61-րդ հոդվածի 1-ին մասի շարադրանքից հետևում է, որ պատժի տեսակը և չափը որոշվում է այն հոդվածի սանկցիայով, որի դիսպոզիցիայի հատկանիշներին համապատասխան անձը մեղավոր է ճանաչվել հանցագործության մեջ: Հոդվածի 1-ին մասը պարտադրում է դուրս չգալ Հատուկ մասի հոդվածի սանկցիայի սահմաններից: Նշանակվող պատիժը չի կարող հոդվածի սանկցիայում նախատեսված պատժի առավելագույն կամ նվազագույն չափից ավելի խիստ կամ մեղմ լինել: Այդ պահանջից բացառություն կարող է անել միայն օրենքը, որը Ընդհանուր մասում նախատեսված հատուկ նորմերի ուժով դատարանին իրավունք է վերապահում դուրս գալ այդ սահմաններից: Ավելի խիստ պատիժ, քան համապատասխան հոդվածի առավելագույնն է, կարող է նշանակվել միայն հանցագործությունների կամ դատավճիռների համակցության դեպքում (քրեական օրենսգրքի 66-րդ և 67-րդ հոդվածներ): Քանի որ նշված համակցությունների դեպքում պատիժ նշանակվում է երկու կամ ավելի հանցագործությունների համար, ուստի քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի պահանջը չի խախտում, իսկ օրենքով նախատեսվածից ավելի մեղմ պատիժ նշանակելու համար պայմանները նախատեսվել են առանձին հոդվածով:

Նյութերից հաստատված է, որ առաջին ատյանի դատարանը հաշվի առնելով ԼՂՀ քրեական օրենսգրքի 61-րդ հոդվածի, ինչպես նաև օրենսգրքի 10-րդ (արդարության և պատասխանատվության անհատականացման սկզբունքը), 48-րդ (պատժի հասկացությունները և նպատակը), Ն62-րդ, 63-րդ (պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող և ծանրացնող հանգամանքները) հոդվածների պահանջները Ա. Սարգսյանին դատապարտել է ազատությունից չզրկելու հետ կապված պատժի: Դատավճիռը մտած է օրինական ուժի մեջ և հենց նշված դատավճռով նշանակված պատիժն է, որ դատապարտյալ Ա. Սարգսյանը պետք է կրի:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քրեական օրենսգրքի 49-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետի համաձայն հանրային աշխատանքները նախատեսվել են որպես հիմնական պատժի տեսակ, սակայն այդքանով հանդերձ հանրայի աշխատանքները օրենսգրքի Հատուկ մասի որևէ հոդվածի սանկցիայում որպես պատժատեսակ չի նախատեսվել:

ԼՂՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 2-րդ, 3-րդ, 5-րդ մասերի համաձայն՝

2) Հանրային աշխատանքները կարող են նշանակվել ոչ մեծ կամ միջին ծանրության հանցագործություններ կատարած, առավելագույնը երկու տարի ժամկետով ազատազրկման դատապարտված անձանց նկատմամբ: Հանրային աշխատանքները նշանակվում են երկու հարյուր յոթանասունից երկու հազար երկու հարյուր ժամ ժամկետով:

3) Հանրային աշխատանքները նշանակվում են որպես որոշակի ժամկետով ազատազրկմանն այլընտրանքային պատժատեսակ ուժի մեջ մտած դատավճիռն ի կատար ածելու կարգադրությունը ստանալուց հետո՝ քսանօրյա ժամկետում՝ դատապարտյալի գրավոր դիմում ներկայացնելու, ինչպես նաև նույն օրենսգրքի 51-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված դեպքերում: Դատարանը դիմումը մերժում է, եթե չի պահպանվել այն ներկայացնելու սահմանված կարգը:

5) Հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելու դեպքում հանրային աշխատանքների չկրած մասը դատարանը փոխարինում է կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ՝ կալանքի կամ որոշակի ժամկետով ազատազրկման մեկ օրը հաշվարկելով հանրային աշխատանքների երեք ժամվա դիմաց:

Հոդվածի շարադրանքից հետևում է, որ անձի նկատմամբ որպես պատժատեսակ հանրային աշխատանքները նշանակելու համար անհրաժեշտ են որոշակի վավերապայմանների առկայություն, մասնավորապես՝ անձի կատարած հանցանքը (հանցանքները) պետք է լինեն ոչ մեծ կամ միջին ծանրության, և դատարանի կողմից անձը պետք է դատապարտվի առավելագույնը երկու տարի ազատազրկման: Հանրային աշխատանքները որպես ազատազրկմանն այլընտրանքային պատիժ նշանակվում է միայն օրինական ուժի մեջ մտած դատավճռի դեպքում, այն ի կատար ածելու կարգադրությունը ստանալուց՝ քսան օրյա ժամկետում՝ դատապարտյալի դիմումի հիման վրա:

Գերագույն դատարանն արձանագրում է, որ օրենսդիրը սահմանելով ազատազրկմանն այլընտրանքային պատժատեսակ հանրային աշխատանքների ձևով նպատակ է հետապնդել ընդառաջել դատապարտյալին և միայն նրա դիմումի (խնդրանքի) հիման վրա խնդիրը լուծել մարդասիրական սկզբունքի հիման վրա: Մարդասիրական սկզբունքը ենթադրում է հնարավորին չափ նվազագույն պատժիչ միջոցների կիրառմամբ հասնել պատժի նպատակներին, բայց պայմանով, որ հանրային աշխատանքներից չարամտորեն խուսափելու դեպքում հանրային աշխատանքների չկրած մասը փոխարինվելու է կալանքով կամ որոշակի ժամկետով ազատազրկմամբ... քանի որ դատապարտյալը օրինական ուժի մեջ մտած մեղադրական դատավճռով դատապարտված է ազատազրկման: ԼՂՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված կարգը վերաբերվում է հենց վերը նշված դեպքերին:

Անդրադառնալով քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ ինչպես նաև օրենսգրքի 51-րդ հոդվածի չորրորդ մասով նախատեսված դեպքերում պարբերությանը, Գերագույն դատարանն արձանագրում է, որ ԼՂՀ քրեական օրենսգրքի 51-րդ հոդվածի 4-րդ մասը սահմանում է՝ տուգանքը վճարելու անհնարինության դեպքում դատարանը՝ տուգանքը կամ տուգանքի չվճարված մասը փոխարինում է հանրային աշխատանքներով՝ հանրային աշխատանքների հինգ ժամը նվազագույն աշխատավարձի դիմաց...

Համաձայն ԼՂՀ քրեական օրենսգրքի 13-րդ հոդվածի 1-ին մասի՝ արարքի հանցավորությունը վերացնող, պատիժը մեղմացնող կամ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքը հետադարձ ուժ ունի, այսինքն՝ տարածվում է մինչև այդ օրենքն ուժի մեջ մտնելը համապատասխան արարք կատարած անձանց, այդ թվում՝ այն անձանց վրա, ովքեր կրում են պատիժը կամ կրել են դա, սակայն ունեն դատվածություն:

Հոդվածից հետևում է, որ քրեական օրենսգրքում հետադարձ ուժ է տրվում հանցանք կատարած անձի վիճակը այլ կերպ բարելավող օրենքին:

Գերագույն դատարանը փաստում է, որ հանցանք կատարած անձի վիճակն այլ կերպ բարելավող օրենքն այն օրենքն է, որը չի վերացնում արարքի հանցավորությունը և չի

մեղմացնում պատիժը, սակայն քրեական պատասխանատվության և պատժի նշանակման, քրեական պատասխանատվությունից կամ պատժից ազատելու կարգի ու պայմանների հետ կապված՝ առավել նպաստավոր պայմաններ է ստեղծում հանցանք կատարած անձի համար:

Գործի նյութերից հաստատված է, որ Ա. Սարգսյանը հնարավորություն չի ունեցել վճարել դատավճռով նշանակված տուգանքը: Փաստորեն դատարանը նրա նկատմամբ նշանակված պատիժը՝ տուգանքը փոխարինելով հանրային աշխատանքներով՝ առավել նպաստավոր պայմաններ է ստեղծել դատապարտյալ Ա. Սարգսյանի համար կրելու նշանակված պատիժը: Հետևաբար, քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանված կարգը միայն վերաբերվում է հանրային աշխատանքները որպես ազատագրկմանն այլընտրանքային պատժատեսակ նշանակված դեպքերին, և Ա. Սարգսյանի նկատմամբ այն կիրառելի չէ:

Նման պարագայում Գերագույն դատարանը գտնում է, որ անհիմն է վճարել բողոքի պատճառաբանությունն այն մասին, որ Դատարանի կողմից անտեսվել է այն հանգամանքը, որ ԼՂՀ քրեական օրենսգրքի 54-րդ հոդվածի 5-րդ կետը կիրառվում է ոչ թե պատիժ նշանակելիս, այլ պատժի տվյալ տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելիս և խոսք չի կարող լինել պատիժ նշանակելու ընդհանուր սկզբունքների խախտման մասին:

Վերը նշված հիմնավորումներով անհիմն է նաև բողոքի պատճառաբանությունն այն մասին, որ նշված հոդվածով որևէ սահմանափակում չի նախատեսվում և որ այն կիրառելի է հանրային աշխատանքները կատարելուց չարամտորեն խուսափելու ցանկացած դեպքում, և որ ԼՂՀ վերաքննիչ դատարանը նման որոշում կայացնելով խախտել է ԼՂՀ քրեական օրենսգրքի 7-րդ հոդվածով նախատեսված պատասխանատվության անխուսափելիության սկզբունքը, համաձայն որի հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է ԼՂՀ քրեական օրենսգրքով նախատեսված պատժի կամ քրեախրավական ներգործության:

«Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների մասին» Եվրոպական կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ոչ ոք չպետք է մեղավոր ճանաչվի որևէ գործողության կամ անգործության համար, որը կատարման պահին գործող ներպետական կամ միջազգային իրավունքի համաձայն, քրեական հանցագործություն չի համարվել: Չի կարող նաև նշանակվել ավելի ծանր պատիժ, քան այն, որը կիրառելի է եղել քրեական հանցագործության կատարման պահին:

Նույն սկզբունքն է ամրագրված նաև ԼՂՀ Սահմանադրության 49-րդ հոդվածի 3-րդ մասում:

Գերագույն դատարանը փաստում է, որ ԼՂՀ վերաքննիչ դատարանը հենվելով Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներին ճիշտ է եզրահանգել, որ «հոդվածում խոսքը վերաբերվում է ոչ միայն նեղ իմաստով պատժի նշանակմանը, այլ այն ավելի ընդհանրական բնույթ ունի և վերաբերում է նաև դատապարտյալի կողմից ընդհանրապես պատժի կրելուն, այսինքն այն իր մեջ ներառում է նաև պատժի մի տեսակը մեկ այլ տեսակով փոխարինելու ինստիտուտը»:

Օրենսդիրը նախատեսելով տուգանքի փոխարինումը հանրային աշխատանքներով՝ նաև նպատակ է հետապնդում նման ձևով ապահովել քրեական իրավունքի պատասխանատվության անխուսափելիության սկզբունքի պահանջները, որը ենթադրում է, որ 1) հանցանք կատարած յուրաքանչյուր անձ ենթակա է ԼՂՀ քրեական օրենսգրքով պատժի կամ քրեախրավական այլ ներգործության, 2) քրեական պատասխանատվությունից և պատժից ազատելը հնարավոր է միայն ԼՂՀ քրեական օրենսգրքով նախատեսված հիմքերի և պայմանների առկայության դեպքում:

Ինչ վերաբերվում է վճարել բողոքի այն պատճառաբանությանը, որ Կոնվենցիայի 7-րդ հոդվածի 1-ին մասում խոսվում է պատիժ նշանակելու այլ ոչ թե պատիժ դնելու մասին, իսկ դատական որոշումների կայացման փուլում պատժի փոխարինում և դատավճռի կայացնելիս պատժի նշանակում տերմինների նույնացումը հակասում է «Իրավական ակտերի մասին» ԼՂՀ օրենքի 35-րդ հոդվածի 4-րդ մասի պահանջներին, Գերագույն

դատարանն արձանագրում է, որ վերաքննիչ դատարանը կայացրել է ըստ էության ճիշտ դատական ակտ, իսկ հողվածի տեքստի մեջ գրված բառի փոխարեն այլ բառ գրելն ինքնին հիմք չի կարող հանդիսանալ ըստ էության ճիշտ կայացրած որոշումը բեկանելու համար, ԼՂՀ վերաքննիչ դատարանի սույն նյութով որոշումը ենթակա է թողնման անփոփոխ:

Գերագույն դատարանը գտնում է, որ վճռաբեկ բողոքում քննարկվող հարցերով առկա է օրենքի միատեսակ կիրառման խնդիր:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ԼՂՀ քրեական դատավարության օրենսգրքի 436-րդ, 438-րդ-440-րդ հոդվածներով, Գերագույն դատարանը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ԼՂՀ Գլխավոր դատախազ Արշավիր Ղարամյանի վճռաբեկ բողոքը մերժել: ԼՂՀ վերաքննիչ դատարանի 2010թ. մայիսի 20-ի որոշումը թողնել անփոփոխ:

2. Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից, վերջնական է և ենթակա չէ բողոքարկման:

ՆԱԽԱԳԱՀՈՂ՝

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ՝

Գ.ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ